Եղիշե Չարենց

Խեղկատակ

Ու գինու պես քո հոգին
Հորդ կթափվի նրանց մութ
Ու մահահոտ հատակին:
«Խրախճանք», բալլադ 1-ի

Կուզե՞ք - երգեմ՝
Ձեզ համար,
Հիմա:
Այնպես երգեմ, որ զգաք-
Ինչ որ կուզեք, կուզեք - սեր
Կուզեք - մահ:
Ես երգում եմ, որ հուզեմ.
Տալիս եմ երգս լուսե
Ու՛մ որ կուզեք. թեկուզ նա
Լինի պոռնիկը վերջին.
Դուր չի՞ գալիս ձեզ միթե
Այս քնքշությունը -
Առջի:

Ես երգում եմ ակամա:
Ի՛նչ էլ երգեմ, կուզեք - սեր,
Կուզեք - մահ: -
Բայց չե՛մ կեղծում ես երբեք:

Լսե՛ք երգերս
Ահա-
Լսե'ք երգերս, բայց թե -
Չհարբեք:
Ես չեմ ուզում, որ հարբեք.
Լավ չէ, գիտե՞ք, երբ որ մի
Անհու՛ն կարոտ դառնում է քաղցր
Քամի…

Չե՞ք հասկանում:
Իզու՛ր, իզու՛ր: Դուք պե՛տք է որ
Հասկանաք:
Թռչել է պետք. սակայն ու՞ր:-

Չե՞ք հասկանում. ես կուզեմ,
Որ իմ երգերը
Լուսե -
Ձեզ թուղթ թվան ու թանաք:
Չեք հասկանում… - Դուք պե՛տք է որ
Հասկանաք:

Ուրիշ - ոչինչ:
Ու հիմա --
Նու՛յնն է նորից. ես երգում եմ, որ հուզեմ
Ես երգում եմ - ակամա:
Ի՛նչ էլ երգեմ՝ կուզեք - սեր,
Կուզեք - մահ:

Ես - խեղկատակ եմ հիմա…